ՆՈՐ-ԴԱՐ

№ 164 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 11 Սեպտեմբերի 1898 Ուրբաթ, 11 Սեպտեմբերի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 164

Տարեկան՝ 10 րուբլի, վեց ամիսը 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ր., հասով 5 կ.
Բաժանորդ գրում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., րեկլամների համար՝ կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Քաղաքական աշխարհից։

Քրոնիկոն.—Լուրեր։

Մեզ գրում են.—Ջուլուց, Յազդիից։

Ինչու է վախենում ժողովուրդը։

Երկու խօսք Թատրոնի առիթով։

Թղթակցութիւններ.—Ախալցխա։ Նամակ Բալդարիայից՝ Ռուսչուկ։

Քաղաքական.—Կրետէի խնդիրը։ Աւստրիայի կայսրուհու սպանութիւնը։ Դրայֆուսի գործը։ Ռուսիան Պարսկաստանում։

Խառն լուրեր։

Հեռագրներ։

Տեղեկատու։

Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 10 սեպտեմբերի, 1898 թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Քաղաքական հորիզոնի վրայ յայտնուող այսօրուայ խնդիրը մոռացնել է տալիս և յետ է մղում երեկ ամենքին զբաղեցնող խընդիրը։

Մի քանի տարի առաջ ամբողջ աշխարհը զբաղուած էր Արեւելքով, Թիւրքիայում կատարուող սոսկալի տեսարաններով. այսօր այդ ամենը մոռացուում է, եթէ մի բան յիշւում է, այդ էլ միայն Կրետէ կղզին և նրա ողբալի վիճակն է։

Մի երկու տարի առաջ ոչ ոք չէր կարող երեակայել, որ առանց Արեւելքը տակն ու վրայ անող խնդիրների գոհացուցիչ լուծման, կարելի կլինի մոռանալ Արեւելքը և նրա ցաւերը։

Բայց այսօր ամենքն էլ պիտին և տեսնում են, որ անցեալը մոռացուած և Արեւելքում ամենքին զբաղեցնող, յուզող խնդիրների լուծումը ad calaendas graecas է ձգուած։

Եւրոպան 1870 71-ի պատերազմներից յետոյ՝ ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու համար ահագին զոհեր բերելով, այդ ժամանակամիջոցում մի քանի պատերազմներ եղան, որոնց մէջ յայտնի են 1877-ի պատերազմը, Չին-Ճապոնական պատերազմը, որի մէջ քիչ էր մնացել, որ Եւրոպան ընկնէր և որի շնորհիւ եւրոպական տէրութիւնների քաղաքականութիւնը և փոխադարձ յարաբերութիւնները աւելի բարդուեցան։ Այնուհետև յայտնի է Սպանիա-ամերիկեան պատերազմը, որ հալիւ թէ վերջացել է և հաշտութեան պայմանագիրը դեռ չէ ստորագրուած, բայց արդէն մոռացած է, ինչպէս և մոռացուած է Թիւրքիայի նեղքին դրութիւնը և ընդհանուր խաղաղութիւնը պահպանելու միջոցին կատարած աշխարհը սարսափեցնող կոտորածները։

Մոռացուած էր և Կրետէն և նրա մէջ մացնելիք ինքնավարութիւնը, մոռացուած էր և յիշել կղզու համար ընդհանուր-նահանգապետի խնդիրը։

Այս վերջերս միայն Եւրոպան ինչպէս և եւրոպական մամուլը ակամայ դարձրեց իւր ուշադրութիւնը Կրետէի և այնտեղ ապրող ժողովրդի վիճակի վրայ։

Եւ այդ կատարուից չնորհիւ այն հանգամանքի, որ Կրետէի *մուսուլմանները* յարձակուել և ջարդել ու սպանել են անպլիացի պահապան զինուորներին, այրել են հիւպատոսարանները, սպանել են եւրոպացիներին։

Այո, այդ հանգամանքի շնորհիւ Կրետէի ջրերում եւրոպան ներկայացնող զինուորական զօրութիւնը, մանաւանդ անգլիացիները սկսել են մեծ եռանդով գործել։

Թրքական կառավարութիւնը, այնուամենայնիւ, դիմադրում է, բայց անգլիացիները այս անգամ հանաք չեն ուզում անել։

Չէ՞ արեւելքի հազարաւոր քրիստոնեաները չեն կոտորուողները, այլ մաքրարիւն անգլիացիները...

Սա կարելի է մարսել։ Ի հարկէ, չի կարելի։

Այդ հանգամանքի շնորհիւ այսուհետև աւելի, քան երբէք, հաւատացած ենք, որ կրետացիները մի բան, մի ինքնավարութիւն կը ստանան։

Երկու տարի առաջ սկզբ է այդ լինէը, որ այսօր էլ այդ քամբախտ կղզին խռովութեան և քաղաքական անտանելի վիճակի մէջ չը լինէը։

Ոչ միայն քրիստոնեայ, այլ և կղզու թիւրք բնակիչների դրութիւնը, կացութիւնն անտանելի է։

Սպասուած ինքնավարութիւնը Կրետէի թիւրքերին էլ կ'ազատէ անտեսական և քաղաքական ողբալի վիճակից։

Բայց երբ կլինի այդ։ Յօժար կամքով թիւրքը ոչինչ չի տալ։ այժմ միայն եւրոպական տէրութիւնները կարող են Կրետէն կարգի բերել, խաղաղացնել և մտցնել այդ կղզում այն կարգերը, որոնք ցանկալի են։

Սեպտեմբերի 1-ից 931-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 4 րուբ. 50 կոպ.։

ՔՐՈՆԻԿՈՆ

Պարսից ներկայ շահի երկրորդ որդին՝ սրինց Զօռու-Սալթանէ Մանուչ-Միրզան, փոխանակ սեպտ. 8-ին, դուրս եկաւ Թիֆլիսից մի օր ուշ։ Նրին բարձրութիւնը ռաղմավիրական ճանապարհով գնալու է նախ Պետերբուրգ և ապա արտասահման՝ բժշկուելու։ Պրինցը ուղարկել է Թիֆլիսի սատիկանապետին 3 հատ արծաթէ «Առիւծի և Արեի» մեդալ, խնդրելով որ բաժանուի այն քաղաքապահներին, որոնք հսկում էին իր իջած հիւրանոցի (Օրիանտ) դրան մօտ։

—

«Նով. Օր.»-ին Պետերբուրգից հեռագրում են.

«Նահանց բժշկական ինսպեկտուան այժմս կարող են մանել եօթը դասարան աւարտողները։

«Բնագիտութեան պրոֆեսոր Նոյն ինսպեկտուում նշանակուած է դոկտոր Վ. Ի. Վարդանեան։

«Կովկաս են ուղարկուում մի քանի վարչութեանց ատիճանաւորներ տեղական կարիքներն ուսումնասիրելու։

«Մատրութիւն կայ պետական վերահսկողութիւն սահմանել Կովկասում մասնաւոր նաեի որոնողների վրայ»։

—

Ղրիմում թօքախտաւորների բուժարան (սանատորիա) բաց անելու համար՝ Կայսրը ամենաողորմածաբար բարեհաճել է թոյլ տալ՝ ամեն տեղ ժողովարարութիւն անելու։

—

Ռուսաց յայտնի աւագ քահանայ Յոհան Սերգէև Կրոնշտադտկին անթերութիւնից վնասուած նահանգների բնակիչների օգտին նուիրել է 3,000 րուբլի։

—

Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան նախագահը մի առևտրական սրնից խնդիր է ստացել, որի մէջ ընկերութեան աջակցութիւնն է խնդրում Անդրկովկասում չաքար պատրաստելու համար ճակընդեղի փորձնական ցանքսեր անելու։ Գիւղատնտեսական ընկերութեան մի քանի անդամները ցանկութիւն են յայտնել իրենց կալուածներում այդպիսի փորձեր անելու։

—

«Կաւկազ»-ը հաղորդում է, թէ ֆինանսների մինիստրութեան մէջ Թիֆլիսի մի քանի քաղաքացիների կողմից խնդիր է յարուցուել Թիֆլիսում հիմնելու խնայողական-փոխառու ընկերութիւն, որի նպատակն է ընկերութեան անդամներին փող փոխ տալ զանազան տնտեսական կարիքների համար, միևնոյն ժամանակ հնարաւորութիւն տալ նրանց խնայողութիւն անելու։

—

Պետերբուրգում մի նոր ձեռնարկութիւն է գալու գալու «Արեւելեան բանկ» անունով, որի գործունէութիւնը բացառապէս ուղղուած կլինի Ծայրագոյն արեւելքի հետ վաճառականութիւնը ծաղկեցնելուն։ Մայրաքաղաքի թերթերի ասելով, յիշեալ բանկի հիմնական դրամագլուխը սկզբում լինելու է 9 միլիոն րուբլի։ Բանկի գործերում մասնակցութիւն կունենան նաև չինացի դրամատէրեր։

—

Եկող 1899 թ. ամառը Պետերբուրգում կայանալու է եւրոպական կոնֆերենցիա, ուր պիտի որոշուի երկմուղու մարդատար գնացքների օտարերկրեայ ուղիղ հաղորդակցութեան կանոնադրութիւն։

—

Տեղական թերթերի տեղով, այսօր սեպտ. 11-ին, Թիֆլիսի քաղաքագլուխ պ. Նեանդուլեանը Պետերբուրգից Թիֆլիս կը ժամանէ։

—

Սեպտեմբերի 9-ին տեղի ունեցաւ քաղաքային խորհրդի առաջին նիստը։ Այդ նիստում օրերի տեղի նախագահ ընտրուեց ձայների մեծամասնութեամբ Բորչալուի դատաւոր հաշտարար դատաւոր պ. Սուլթանցը։

—

Սեպտեմբերի 7-ին Թիֆլիսի քաղաքային վարչութեան մէջ տեղի ունեցաւ խորհրդի ուսումնարանական յանձնաժողովի նիստը, ուր, ի միջի այլոց, որոշուեց 3 նորաբաց քաղաքային դպրոցներում հրաւիրել կրօնուսոյցներ՝ ռուսադաւանների համար հայր Ասատիանին և հայր Շագունովին, իսկ հայադաւանների համար Ս. քահ. Սահակեանին։ Վրաց լեզուի համար հրաւիրուած են իշխանուհի Ջափարիձէ և տիկին Խմդադով, իսկ հայերէնի համար—Ղալումեան և Շահ-Ազիզեան։

—

Խմբագրութիւնս ստացել է Յովհաննէս Մալխասեանի «Հօրոտ-Մօրոտ» խորագրով մի գրքոյկ, որը Ջաւախքի գիւղացիների կեանքից առած պատկերների մի ժողովածու է։ Գրքոյկի մէջ զետեղուած է 6 պատկեր։ Բաղկացած է 165 էջից և արժէ 30 կ.։

—

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՁՈՒԶՈՒՅ. — Վեհափառ Հայրապետը հոգևոր գործոց տեսուչ՝ արժ. Տիրայր վարդապետին լիազորութիւն տալով նըշանակեց նոյն պաշտօնի մէջ և ուսուցչական խումբը կարևոր համարեց անփոփոխ թողնելու, բայց միայն հրաժարուեց պ. Տէրտէրեանը։ Արժ. հայր սուրբն այժմ հիւանդ է և մի քանի օր է որ պառկած է անկողնում։ Դպրանոցում արդէն սկսուել են քննութիւնները ու վերաքննութիւնները։

— Թէև «Կամելիաղարդ տիկինը» մեր թատրոնական խմբի վերջին ներկայացումը պէտք է լինէը, բայց մեր դերասաններն ու դերասանուհիները չբաւականացան եղած արդիւնքներով, այլ մի երկու ներկայացում ևս տուին։ Պ. Պետրոսեանը մի երկու դերասանի հետ հեռացաւ քաղաքից Թիֆլիս. իսկ մնացած դերասաններն ու դերասանուհիները երկու խմբի բաժանուած երեք ներկայացում տուին։ Խմբերից մէկի գլուխն էր անցել տիկին Մէլիքեանը, որը իւր խմբի և թատերասէրների մասնակցութեամբ ներկայացրեց «Պարիզի չըմոլիկը»։ Սեպտեմբերի 3-ին պ. Օհանեանը դարձեալ նոյն խմբի հետ խաղաց «Անաղնիւ չէն ծնուում» դրաման և «Խելագար»։ Ամսոյս 5-ին օր. Վարդիթերը, Մարի Հրանոյշը, պ. Զարիֆեանի և թատերասէրների հետ ներկայացրեց «Գեղջ զրամահատը»։ Ներկայացումը մի աղբատ ուսանողի օգտին էր, բայց դժբաղդաբար թատրոնը կիսով չափ դատարկ էր։ Սրանով վերջացաւ մեր ամառուայ սեզոնը և այսօր մեր դերասաններն ու դերասանուհիները ցրուեցան դէպի Թիֆլիս և Բագու։ Ընդհանրապէս ասած, այս ամառ շատ զուարճալի էր մեր հասարակութեան համար, որովհետև չաբաթական 2 ներկայացում էր լինում, մէջ-մէջ պարեր էին լինում և հասարակութիւնը սիրով յաճախում էր։ Բայց միայն բուլվարում մուզիկ չէր նուագում՝ շնորհիւ մեր քաղաքային ինքնավարութեան անհոգութեան։

—

ՅԱԴԵՐԻՒՑ (Լեչխումի գաւառ).—Հինգ օր առաջիկ անձրև գալուց յետոյ բոլորովին անպատեհի կերպով եղանակները փոխուեցին, այնպէս որ մրսելու չափ ցրտեր էին լինում. իսկ սեպտ. 6-ին այստեղից երեք վերստ հեռաւորութեան վրայ լեռները ծածկուեցան չորս վերշոկ հաստութեամբ ձիւնի սպիտակ սաւանով։ տեղացի ծերերի պատմելով առաջին անգամն է, որ սեպտեմբերի սկզբներին այսպիսի ցուրտ և ձիւն է լինում։ Եթէ եղանակը մի քանի օր էլ այս կերպ չարունակուի, բոլոր եգիպատացորենները կը փչանան, որոնք տեղացի բնակիչների միակ յոյսն են։

ԻՆՉՈ՞Ւ Է ՎԱԽԵՆՈՒՄ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

(Նամակ խմբագրութեան)

—

Յարգոյ բժիշկ Սիմէոն Շահ-Նազարեանը «Նոր-Դար»-ի № 153-ում զետեղել է մի նամակ Հին-Նախիջևանից՝ «Բարքերի կատարեալ անկում» վերնագրով, որտեղ փաստօրէն ապացուցանել է աշխատում, որ բարքերն ընկած են, օրէնքն և այդ օրէնքը գործադրող անձինք անզօր են առաջինի դէմ, որ ժողովուրդը վախկոտ է կամ վախենում է դիւղի գլուաւորից՝ գալ վկայելու մի հասարակ բան—բժշկի գիւղ գալը։

Թերևս մեր այս գրութիւնն աւելորդ համարուէը, եթէ յարգոյ բժիշկը փոքր ինչ աւելի նեղութիւն կրէը յուսաբանելու, թէ ինչու է վախենում ժողովուրդը գլուաւորից, ինչու է նա խոյս տալիս գատաստանատներից, ճշմարտութիւնը, արատաւորուած պատիւը վերականգնելուց։ Ահա՛ այս հարցերը պարոն բժիշկը պիտի նեղութիւն կրէը բացատրելու, որից յետոյ գուցէ խնայէը իւր նամակի վերատաւութիւնը «Բարքերի կատարեալ անկումն» դնելու և դատապարտելու ժողովրդի, աւելի ճիշտ ասած՝ գիւղացիների երկչոտութիւնը։ Ժողովուրդն ամեն տեղ և ամեն ժամանակ իւր միջից լաւ և վատ անհատներ, բարոյական և անբարոյական երևոյթներ արտադրել է և արտադրելու էլ է, իսկ բժշկել ցանկացողը պէտք է՝ նախ ուսումնասիրէ և լաւ ուսումնասիրէ վատ երևոյթների սկզբնապատճառները, այնպէս՝ որպէս բժիշկը տկարութեան սկզբնապատճառներն է ուսումնասիրում և գրում իւր դեղատոմսը։

Ժողովուրդը վախենում է գլուաւից։ Մենք կաւելացնենք, որ նա վախենում է նաև՝ պրիստաւից, գաւառապետից, նոյն իսկ «հասաւուից» և այլն, և այլն։

Աչուղին հարցնում են թէ՝ «աչուղ, ինչից ես վախենում», ասում է.—«Ճեսածիցս, կաշուիս վրայ փորձածից»։

Եթէ դուք, յարգոյ ընթերցող, գաւառացի էք կամ բաղդ էք ունեցել այցելելու հայաբնակ գաւառներ, մանաւանդ այն դաւառները, որոնք սահմանակից կամ մօտ են Պարսկաստանին՝ անշուշտ մեր յառաջացրած հարցը ձեզ համար շատ պարզ պիտի լինի, դուք անշուշտ նուաստիս պէս եկած պիտի լինէք այն եզրակացութեան, որ իրաւագիտութիւնը մեր ժողովրդի մէջ պարսկական տիրապետութիւնից յետոյ մի քայլ անգամ յառաջ չէ գնացել, և մեր ժողովուրդը դեռ ևս ապրում, անում է պարսկական իրաւագիտութեամբ և եթէ յառաջ էլ է գնացել, այնքան աննշան՝ որ համարձակ կարելի է ոչնչի տեղ ընդունել։

Ամեն մարդ իր ուրախությունն ունի, որ ինքն է զգում, ուրիշը չի կարող զգալ, որովհետև ուրիշի սիրտը ուրիշինն է, ուրիշի աչքը ուրիշինն է, ուրիշի ականջը ուրիշինն է, ուրիշի ոտքը ուրիշինն է, ուրիշի ձեռքը ուրիշինն է, ուրիշի մարմինը ուրիշինն է, ուրիշի հոգին ուրիշինն է, ուրիշի միտքը ուրիշինն է, ուրիշի ամեն ինչը ուրիշինն է, ուրիշինն է, ուրիշինն է,

ՀԱՅԱՍՏԱՆ

ԲՈՍՏՈՆ, 8 նոյեմբերի. — Մեսսաչուսեթսի նահանգի ընտրատեղամասերի 9 ձայնատուփերի հաշվարկի համաձայն՝ Դուկլասը — «Standard»-ին ուղարկած հեռագրում կ՚ասի, որ Մասաչուսեթսի նահանգի նոր օրենսդիր ժողովի 200 անդամներից 155-ը հանրապետական են, 45-ը՝ դեմոկրատ։ Այս նահանգի նախկին օրենսդիր ժողովում 100 անդամ հանրապետական էր, 100 դեմոկրատ։ Այսպիսով հանրապետականները կորցրել են 55 տեղ։ Նահանգապետական ընտրություններում հանրապետականները 79-ը հոգի էին ուղարկել, իսկ դեմոկրատները՝ 21-ը։ Ընդհանուր հաշվով հանրապետականները կորցրել են 24 տեղ։ Նահանգապետական ընտրություններում հանրապետականները 100 հոգի էին ուղարկել, իսկ դեմոկրատները՝ 55-ը։ Ընդհանուր հաշվով հանրապետականները կորցրել են 45

«Times»-ին Կանդիայից հեռագրում են, որ ծովակալ Նոէլը բոլոր առագաստանաւերին հրամայել է դուրս գալ նաւահանգստից ի դէպս, եթէ հարկաւոր լինի ռմբակոծել։

Կ. ՊՈԼԻՍ.—Այստեղ չեն կարծում, որ անգլիացիներին յանձնուած 42 մահմետականները բանտարկեանց գլխաւոր հեղինակները լինեն։ Առաջին գործերի գլխաւորը քարտուղարն ուղարկուեց բրիտանական դեսպանատունը առաջարկելու, որ Կրետէից արտաքսուեն Կանդիայում եղած անկարգութեանց պարագլուխները։ Բրիտանական գործակալը պատասխանեց, որ այդ գործը վերաբերում է Կրետէի դատարանին։

ԿԱՆԴԻԱ.— Էդհեմ փաշան յայտնեց, որ զէնքը, սուլթանի հրամանով, պէտք է յանձնուի այդ բանի համար նշանակուած յանձնաժողովին։ Զէնքն արդէն սկսել են յանձնել։ Ֆրանսիական, ռուսաց և իտալական մարտանաւերն ու զօրքերը հեռացան Կանէայ։

ՊԱՐԻԶ.—Օրլէանի հերցոգը մի մանիֆեստ է հրատարակել, որի մէջ բողոքում է սինիստրների որոշման դէմ, որոնք Թէէ Դրայֆուսին մեղաւոր են ճանաչում, բայց կամենում են ազգային խնդիրը լուծել, առանց պատգամաւորների ժողովի հետ խորհրդակցելու։ Հերցոգը նրբանց մեղադրում է այն բանի համար, որ յանցաւորին արդարացնելու պատրուակով նրանք ուզում են խափանել զօրքը և կործանել Ֆրանսիան։

ՈՒԱՇԻՆԳՏՈՆ. — Սան-Ֆրանցիսկոյում գտնուած հինգ զօրապետ հրաման ստացան մեկնել Մանիլա։

ՄԱԴՐԻԴ, 9 սեպտեմբերի.— Խնամակալ-թագուհին պատասխանեց գրաֆ Մուրաւեովի շնորհակալականին՝ գովելով ռուսաց Կայսրի ծրագիրը և կատարեալ համաձայնութիւն յայտնելով։ Սպանիական պատուիրակ կընշանակուի այն ժամանակ, երբ կընդունուի կոնֆերենցիան։

ԼՈՆԴՈՆ. — Բուէնոս-Այրեսից հեռագրում են. «Սահմաններին վերաբերեալ 2-րդի և Արգենտինի միջև եղած վէճը լուծուած է»։

ԲՈՒԴԱՊԵՍՏ. — Քաղաքային բարձր վարչութիւնը արտաքսում է այն բոլոր անշնորհականներին, որոնք քաղաքացիների թուին չեն պատկանում։

ԼՈՆԴՈՆ.—Կանդիայից հեռագրում են. «Էդհեմ փաշան բանեց անկարգութեանց մի քանի գլխաւոր հեղինակներին»։

«Times»-ին Մանիլայից հեռագրում են. «Ապստամբները եռանդով գինուորներ են հաւաքում. Մանիլայում ամեն օր հրետանու մարդիկ գինուոր են գրւում. բայց ապստամբների վարմունքն աւելի բարեկամական է դարձել։ Ամերիկական զօրքերի մէջ 10% հիւանդ կայ»։

ՊԱՐԻԶ.—Դեսնրալ Յուլլիդէն Պարիզի նահանգապետ նշանակուեց։

ԲԱՐՅԵԼՈՆԱ.—10 լուսացի ձերբակալուած են։ Այդ ձերբակալութիւնները կապ ունին Լուկենի սպրագործութեան հետ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐԱՆ ՍՊԱՆԴԱՐՈՒՆԱՑ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԳՐԱՊԱԿԱՍԵԱՆ ԵՐԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 Բագուից Թիֆլիս մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր. հասնում է Թիֆլիս առ. 8 ժ. 26 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում առ. 9 ժ. 10 ր., հասնում է Բաթում եր. 8 9. 47 ր.

Փոստային գնացքը № 3 Բագուից, Թիֆլիս մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 6 ժ. 33 ր., մեկնում է Թիֆլիսից Բաթում եր. 7 ժ. 48 ր., հասնում է Բաթում առ. 8 ժ. 33 ր.

Մարդատար գնացքը № 2 մեկնում է Բաթումից Թիֆլիս առ. 8. ժ. 20 ր., հասնում է Թիֆլիս եր. 8 ժ. 22 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու եր. 9 ժ. 05 ր., հասնում է Բագու օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է Բաթումից Թիֆլիս եր. 8 ժ. 35 ր., հասնում է Թիֆլիս առ. 9 ժ. 07 ր., մեկնում է Թիֆլիսից Բագու առ. 10 ժ. 57 ր., հասնում է Բագու առ. 5 ժ. 45 րոպէին։

—

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՀԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերուան է Մլեխում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասհաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 3 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 5 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեխում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Գուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառք (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օր եր.7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլոլակ, Սապովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռաթոռ № 230

Երեխեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 երեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդները և ծննդաբերը կամայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի արուի. վճարը որոշում է ըստ դասակարգերի։ Հոգեվարքները ձրի են։ Գինեկոլգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքի ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երեխեկ բոլոր հիւանդները պէտք և նիւթերը ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Հոգևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր դ տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

Մ. ՊԵՏՐՈՍԵՀԱՆԻ

տեղափոխուեց Կիրէևի տուն, Պոլիցէյսկայա փողոց, ԲԱԴՈՒ։ Ընդունելութիւնը կըսկսուի սեպտեմբերի 1-ից։ Մանկական պարտէզի, ուսումնարանի և պանսիոնի մանրամասն ծրագիրը (և նպատակը) կարելի է ստանալ օգոստոսի 27-ից։

(1092) 10—7

ԼՈՑՍ ՏԵՍԱԼ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱԼԽԱՍԵԱՆԻ

„ՀՕՐՈՏ-ՄՕՐՈՏ“

(պատկերներ իրական կեանքից)

ՈՒՐԱԽԻՆ ԳԻՐՔԸ։

ԳԻՆԸ Է 30 Կ.։

Գիմել Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցները և իրեն հեղինակին։ 10—1

ՆՈՐ ՈՍԿԵՐԻ

ամենաչքնդ. ամենագիմացկուն, ամենաճիշտ և խիստ էժան

!!! ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ !!!

Ռեմոնտուարը իսկական Ժընեվի, կազմը խիստ չքնդ Պարիզի իսկական էմայլով, վրան փիլդուններ։

ԲԱՑ ժամացոյցն արժէ 6 րուբ., ՓԱԿԸ 7 ր. 50 կ.։

Ուղարկում է փաթաթուած և մինչև րոպէներն ուղղուած, 5 տարուայ երաշխաւորութեամբ՝

ПАРИЖСКІЙ ЛУВРЪ

въ ВАРШАВѢ, Королевская, 51.

երկու րուբլի կանխավճար ստանալուց յետոյ, մնացածը վերադիր վճարով։

ՆՈՐ ՈՍԿՈՒ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ ՊԱՐԻԶԻ ԻՍԿԱԿԱՆ ԷՄԱՅԼԻ ՓԻԳՈՒՐՆԵՐՈՎ։

(M.) 93848 10 – 5

„Грѣхи Молодости“

ПОУЧИТЕЛЬНОЕ СЛОВО КО ВСѢМЪ, РАЗСТРОИВШИМЪ СВОЮ ПЕРВУЮ СИСТЕМУ ОНАНИЗМОМЪ И РАСПУТСТВОМЪ.

Соч. Д-ра ЛОРЕНЦЪ.
Русское изданіе Д-ра Б—а.
цѣна 1 руб.

Эта полезная книга содержитъ множество совѣтовъ, какъ избавиться страдающимъ отъ вредныхъ послѣдствій вышеозначенныхъ пороковъ и возстановить разстроенныя силы и здоровье. Книга эта разрѣшена Москов. Цензурнымъ Комитетомъ.

Складъ изданія только у ОТТО АСПЕРГЕРА ВЪ ЛЕЙПЦИГѢ (Саксонія). Иногородные за почтов. пересылку не платятъ.

120397 (М.) 21 – 2

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Լոյս տեսաւ

ՓԱՐՓԵՄ

(HOMO SUM)

վէպ

Գերմաներէն բնագրից Թարգմանեց

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

428 երես, ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ

Գիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.

(1067) 50 – 13

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՈՆ

ՏԷՐ-ՅՈՎՍԷՓԵԱՆԻ

Երեխաների ընդունելութիւնը օգոստոսի 22-ին է։ Ուսումը սկսւում է սեպտեմբերի 1-ից։

(1087) Սոլոլակ, Սապովայա փողոց, տուն № 46։ 10—7

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ՏԵՍԱՆԵԼՈՑ ԵՒ ՕՏԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական Կուրսերի նպատակն է մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են առտեստատներ։

Առանձին առարկաները սրանք են.—1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրայ, 5) Առևտրական Իրաւաբանութիւն 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) Դեղագրութիւն, (վատ ձեռքի—почеркъ—ուղղելը)։

Ուսումն սկսւելու է սեպտեմբերի 15-ից։ Ընդունելութիւնները, սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, առաւօտեան 10-ից մինչև 11-ը և երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սոլոլակում, Ալէքսանդր Փրիդոնովի տանը, № 9, Սերպիևսկայա և Նադորնայա փողոցների անկիւնում։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղը. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսեր հիմնողին.—

въ Тифлисѣ, С. П. Манузьянцу.

(1053) 25—22.

ИЗДАНІЕ ГАЗЕТЫ „КАЗБЕКЪ“

пріостановленное распоряж. г. Министра Внутр. дѣлъ, на 8 мѣсяцевъ

Возобновляется со 2-го сентября 1898 г.

ПРИНИМАЕТСЯ ПОДПИСКА

НА ОБЩЕСТВЕННУЮ, ПОЛИТИЧЕСКУЮ И ЛИТЕРАТУРНУЮ ГАЗЕТУ

„КАЗБЕКЪ“

УСЛОВІЯ ПОДПИСКИ:

Съ доставкою во Владикавказѣ на одинъ годъ . . . . . 6 руб.
Съ пересылкою иногороднимъ „ „ „ . . . . . 7 руб.
Съ сентября по 31 декабря 1898 г. какъ городскимъ, такъ и иногороднимъ подписчикамъ два руб.

ПЛАТА ЗА ОБЪЯВЛЕНІЯ:

На 1-й страницѣ за 1 разъ 20 коп. послѣдующіе разы 10 к. | со строки петита
На 4-й „ „ 1 „ 10 коп. „ „ 5 к. | со строки петита

ОТДѢЛЬНЫЙ НОМЕРЪ 5 К.

Подписываться можно съ перваго числа каждаго мѣсяца и до конца года.
Подписка и объявленія принимаются во Владикавказѣ, въ конторѣ зак. „Казбекъ“ у издателя С. І. Казарова 3—3

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Լոյս է տեսել «ՔՆԱՐԻԿ ՄԱՆԿԱԿԱՆ» եւրոպական ձայնագրութեամբ, որ յարմարեցրած է դաշնամուրի վրայ նուագելու և երգելու համար։ «Քնարիկը» պարունակում է իր մէջ 27 հատ մանկական ընտիր երգեր, պարերգեր և աղօթքներ, որ Ս. Էջմիածնի նախկին ուսուցչական ժողովի կողմից ընդունուած է ի շարս լաւագոյն դասագրքերի։ Արտասահմանի հայ գաղութների խորին ուշադրութիւնն ենք հրաւիրում այս գիւրամատչելի եղանակով կազմուած երգարանի վրայ, որ վաճառւում է Թիֆլիսի «Կենդրոնական զրավաճառանոցում», պ. Յովհ. Սուլթանճեանի երաժշտ. մագազինում և ինձ մօտ։ Ինչ գիմողները բացի մեծ զիջումից, նաև ճանապարհածախք չեն վճարում։ Հատով՝ 1 ռ. 50 կոպ., 50 օր. 1 ռ. 20 կոպ., 100-ով գնողներին՝ 1 ռ.։ Յանկացողները պիտի գիմեն այս հասցէով՝ «Սիմֆերոպոլ—Դաղարոս քահ. Յովսէփեանց»։ (1038) 50 – 37

Дозв. цензурою. Тифлисъ, сентября 10 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типография А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.